ՄԱՅՐ ԱԹՈՌ

– Սինօդը իր յունուարի 28-ին թ. 62 օրագրութեամբ որոշել է Մեսսինայի երկրաշարժից վնասուածների օգտին Մայր-Աթոռի գանձարանից տալ մի հարիւր ռուբլի և այդ գումարը Տ. Տեղակալի միջոցաւ փոխադրել է Կոմսուհի Վօրօնցովա-Դաշկովային։

Սինօդը փետրուարի 2-ին թ. 76 օրագրութեամբ որոշել է Խրիմու ս. Խաչ վանքի վանահայր Տ. Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանին արձակել յիշեալ վանքի վանահայրութիւնից և կոչել ի Մայր Աթոռս, իսկ վանքի ժամանակաւոր կառավարչութիւնը յանձնել Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանին։

Սինօդը փետրուարի 10-ին լսելով Սինօդի անդամներից կազմուած խորհրդի զեկուցումը Մայր-Աթոռի ճեմարանի 1908|9 ուս. տար. Նախահաշիւի մասին մի քանի փոփոխութիւններ մտցնելով ուղարկեց ի տնօրէնութիւն Ամենապատիւ Տէր Տեղակալին որն հաստատելով այն վերադարձրեց Սինօդ յանձնարարելով տալ ի գործադրութիւն։

Սոյն համարում օրագրական քաղուածների բաժնում Սինօդի հրամանով արտատպում ենք փետրուարի 11-ին թ. 91 կազմած օրագիրը, որով Բագուի Մեսրոպ ա. ք. Տէր Ոսկանեանցը կարգալոյծ է արւում իր բազմաթիւ զեղծումների և անուղղայ բնաւորութեան պատճառով։

Երնջակի վանահայր Վահրամ վարդապետ Սլկունին խնդրել էր տալ իրեն ի միաբանակցութիւն Նիկողայոս վրդ. Տէր Աւետիքեանին, որն սիրայօժար կամքով յանձն առաւ գնալ, ուստի Սինօդը փետրուարի 13-ին թ. 93 օրագրութեամբ որոշեց թոյլ տալ Ն. վ. Տ. Ա.-ին գնալ Երնջակայ վանքը։

«Արարատի» սոյն համարից բաց ենք անում Մանկավարժական–դպրոցական բաժին, ուր անընդհատ տպագրուելու են Մանկավարժ պ. Ա. Օլթեցեանի և այլոց յօդուածներն ու տեսութիւնները մանկավարժական-դպրոցական խնդիրների վերաբերութեամբ։

—Սոյն համարից սկսած իբրև յաւելուած առանձին երեսահամարներով տալիս ենք «Ջոջանց տան» կամ «Սասմայ ծռեր» ժողովրդական վէպի նոր վարիանտները, որոնց մասին յատուկ յառաջաբան խոստացել է գրել Պատմութեան ուսուցիչ պ. Ստեփան Կանայեանը, երբ բնագիրների տպագրութիւնը կվերջանայ։

Յօդուա Տաճկահայոց Հանգանակիչ Մասնաժողովի դադարումը.

1907 թուին ի Տէր հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի կոնդակով Տփխիսում կազմուած էր Յանգանակիչ Մասնաժողով, որը թոյլտուութեամբ պետական իշխանութեան դրամներ էր ժողովում յօգուտ Տաճկահայ սովելոց։ Մի տարուց աւելի գոյութիւն ունենալով բաւականաչափ նպաստներ ուղարկեց տառապող Տաճկայոց, սակայն այժմ կառավարութիւնը պահանջել է դադարեցնել իր գործունէութիւնը, որովհետև օրէնքի տրամադրութեամբ միայն մէկ տարի կարող էր գործել։ Այս առթիւ Հանգանակիչ Մասնաժողովը այս մարտի 3-ին № 146 գրութեամբ դիմել էր Նորին Ամենապատուութիւն Տէր Տեղակալին և խնդրել էր միջնորդութիւն յարուցանել Կովկասի Փոխարքայի մօտ, որպէս զի թոյլ տայ Հանգանակիչ Մասնաժողովին շարունակել ժողովարարութիւնը։

Նորին Ամենապատուութիւնը ամսոյս 7-ին № 869 միջնորդական գրութեամբ դիմեց Պայծառափայլ Իշխան Փոխարքային և մեծ յոյս ունենք, որ Մարդասէր Իշխանը չի մերժիլ այս միջնորդութիւնը։